ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/10» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

25.09.2018թ.
ժամը 10 ⁰⁰

Մասնակիցներում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան,
Գնահատողներ՝
- ՀՀ ՋՈՒ ՍՎ ՋՏԾ հաշվառման բաժնի ավագ սպա՝ փոխգնդապետ Կ. Ավետիսյան,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՀԱ, ԶՏ և ԱՏ միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ն. Զախալյան,
-ՀՀ ՋՈՒ ՍՎ ՋՏԾ շահագործման և պլանավորման բաժնի ավագ սպա՝ փոխգնդապետ Է. Թովմասյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի բաժնի պետի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Բաղրամյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին «Սոլեր» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են, սակայն տեխնիկական բնութագրերը ներկայացված են թերի, մասնավորապես՝

1. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/10» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով սահմանվել է՝ փաթեթավորումը՝ մինչև 10լ.-ոց տարաներով, մինչդեռ մասնակցի կողմից ներկայացված հավելված 6.1-ում նշվել է տարա՝ 20.կգ.:

2. Պահպանման երաշխիքային ժամկետ հրավերով սահմանվել է (1-ին և 2-րդ չափաբաժինների մասով) 12 ամիս, մինչդեռ մասնակցի կողմից ներկայացված հավելված 6.1-ում դրա վերաբերյալ նշում չկա:

3. Հրավերով սահմանվել է (1-ին և 2-րդ չափաբաժինների մասով), որ Ապրանքի հանձնման ժամանակ պետք է ներկայացվի համապատասխանության սերտիֆիկատ, մինչդեռ մասնակցի կողմից դա չի նշվել:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը ՀՀ պետական բյուջեի եկամտամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

27.09.2018թ ին գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները

Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող շտկումները: Գնահատող հանձնաժողովը քննարկելով «Սոլեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերի շտկված տարբերակը՝ որոշեց մասնակցի ներկայացրած փաստաթղթերը գնահատել հրավերի պահաջներին բավարարող:

1.2 27.09.2018թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Սոլեր» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/10» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Բաղրամյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11⁰⁰-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող, (ԳԱՊ)	Տ. Մաթևոսյան
Գնահատող,	Կ. Ավետիսյան
Գնահատող	Ն. Չախալյան
Գնահատող	Է. Թովմասյան
Գնումները համակարգող՝	Ա. Բաղրամյան